

ՀԱՄԱՅՆԱԳԻՐ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՐԻՌԻՎԻ-ՎԵՆԵՑԻԱ ԶՈՒԼԻԱ
ՆԱՀԱՆԳԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻՋԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ՏՈՒՐԻՉՄԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«< 11 >» մայիսի 2011թվական

ք. Իջևան

Իտալիայի Հանրապետության ֆրիովի Վենեցիա Զովիա նահանգը և
Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը /այսուհետ՝ Կողմեր/, ենելով
իրավահավասար և վստահելի գործընկերության կառուցման և զարգացման
հարաբերությունների մտադրությունից, Իտալիայի Հանրապետության և Հայաստանի
Հանրապետության միջև տարբեր ոլորտներուա համագործակցության զարգացմանն
ուղղված գործող պայմանագրերից և նկատի ունենալով Իտալիայի Հանրապետության
ֆրիովի Վենեցիա Զովիա նահանգի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
միջև ստեղծված բարեկամական հարաբերությունները, պայմանավորվեցին ներքոնշյալ
մասին.

Հոդված 1

Կողմերն իրավահավասար, փոխըմբռնման, հարգանքի և վստահության հիման վրա
ձգտում են զարգացնել երկարաժամկետ և բազմակողմանի մշակութային, տնտեսական և
գիտատեխնիկական կապեր:

Հոդված 2

Կողմերը կնպաստեն Իտալիայի Հանրապետության ֆրիովի Վենեցիա Զովիա
նահանգի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տնտեսվարող սուբյեկտների
միջև փոխշահավետ կապերի ստեղծմանը՝ հատկացնելով առանձնահատուկ ուշադրություն
գրասահման և կրթական համատեղ ծրագրերի իրականացմանը:

Հոդված 3

Կողմերը կաջակցեն տնտեսվարող սուբյեկտներին համատեղ նպատակային ծրագրերի
նախագծերի մշակման, իրականացման, ինչպես նաև ցուցահանդես-տոնավաճառների
կազմակերպման ժամանակ:

Հոդված 4

Կողմերի փոխգործակցությունը պետք է իրականացվի համապատասխան
պայմանագրերի, համաձայնագրերի, արձանագրությունների հիման վրա, որտեղ
կներգրավվեն նաև տնտեսվարող սուբյեկտները:

Հոդված 5

Ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորելու, արտաքին ներդրումներ ներգրավելու, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն առաջացնող այլ հարցերի կապակցությամբ Կողմերը փոխանակում են անհրաժեշտ տեղեկատվություն:

Կողմերը պարտավորվում են ժամանակին տեղեկացնել իրենց օրենսդրության այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սույն Համաձայնագրի իրականացման վրա:

Հոդված 6

Երկողմ պայմանավորվածության համաձայն՝ Կողմերն իրենց տարածքներում օժանդակում են համատեղ ուժերով ստեղծված կազմակերպություններին և աջակցում են նրանց բնականոն գործունեությանը:

Հոդված 7

Համաձայն գործող օրենսդրության՝ Կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում ձգտում է ապահովել բարենպաստ պայմաններ տնտեսվարող սուրբեկության առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության իրականացման համար:

Հոդված 8

Կողմերը ծևավորում և զարգացնում են կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական պաշտպանության, սպորտի և տուրիզմի բնագավառների կապերը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում նրա ստորագրման պահից և գործելու է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից որևէ մեկը գրավոր ծևով մյուս Կողմին չի իրազեկի իր՝ այդ գործունեությունը դադարեցնելու մտադրության մասին: Այդ դեպքում Համաձայնագրի գործունեությունը դադարեցվում է՝ մյուս Կողմի ծանուցման ստացման օրվանից երեք ամիսը լրանալուն պես:

Համաձայնագիրն ստորագրվել է Իջևան քաղաքոա, << 11 >> մայիսի 2011թ. չորս բնագիր՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք ունեն հավասարագոր ուժ:

Խոտակիայի Հանրապետության
Ֆրիովի Վենեցիա Զովիա նահանգի Կողմից

Ֆրիովի-Վենեցիա Զովիա նահանգապետ՝

Ռենզո Տոնդո

Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզի Կողմից

Տավուշի մարզպետ՝

Արմեն Ղուլարյան

A G R E E M E N T

On
CO-OPERATION IN THE FIELDS OF ECONOMICS, KNOW -HOW, TOURISM AND
CULTURAL EXCHANGE
BETWEEN
FRIULI - VENEZIA GIULIA REGION OF ITALIAN REPUBLIC AND TAVOUSH MARZ
OF THE REPUBLIC OF
ARMENIA

“ 11 ” May 2011

City of IJEVAN

Seeking for establishment and further development of equitable and trusty partnership based on existing agreements between the Italian Republic and The Republic of Armenia in various fields of co-operation, and considering the amicable relations between in The Friuli – Venezia Giulia Region of the Italian Republic and the Tavoush Marz of the Republic of Armenia (hereinafter referred to as The Parties), the Parties have agreed on the following:

Article 1

The Parties seek to establish and further develop, equitable, trusty and mutually acceptable co-operation in the fields of economics, know-how, tourism and cultural exchange.

Article 2

The Parties will aid to establish mutually profitable relations between business entities and business individuals of the Friuli – Venezia Giulia Region of the Italian Republic and the Tavoush Marz of the Republic of Armenia, paying special attention to such relations in the fields of tourism and education.

Article 3

The Parties will provide necessary assistance to the business entities in development and realization of joint Projects, and organizing of Exhibitions and fairs.

Article 4

The Private entities and Business individuals will be extensively involved in mutual activities of the Parties through Agreements, MOU's and Protocols.

Article 5

In order to attract investments, develop business environment and assess points of mutual interests, the Parties will regularly exchange information. The Parties will also inform each other on any changes in their legislations, which may affect this Agreement.

Article 6

The Parties agree to provide necessary assistance to Joint Venture companies established in their regions to ensure their normal business activity.

Article 7

The Parties will provide for sufficient legal environment on their territories to enable fair competition in business, trade and know-how.

Article 8

The Parties will establish relations in the fields of education, health care, social security, sports and tourism.

Article 9

This Agreement enters into force as of the time of its signing and remains operative until such time when one of the Parties notifies in writing other Party on his intention to terminate this Agreement. After such written notification the Agreement will be terminated after three months from of the date of the notification.

This Agreement is signed in the City of Ijevan on " 11 " May, 2011 in 4 (four) originals in Armenian and English languages, all of which will have the same juridical force.

On Behalf of the
The Friuli – Venezia Giulia Region
of the Italian Republic

Renzo Tondo

Governor



On Behalf of and the Tavoush Marz
of the Republic of Armenia

Armen Ghularyan

Marzpet

